

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունվարի 1-ին, երեքշաբթի.—Կաղանդ, Տարեմուտ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ծնորհք աբդ. Բաղդասարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Հավարտ պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 5-ին, շաբաթ.—Ճրագալոյց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 6-ին, կիրակի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 7-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, հոգեհանգստյան ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Հունվարի 13-ին, կիրակի.—Տօն Անունակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ եպս. Պարսամյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 16-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունվարի 20-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Կանադայի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովնան եպս. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունվարի 23-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

Հունվարի 25-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող գերաշնորհ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը ներկաներին հանգամանորեն ծանոթացրեց նոր կազմվող ներքին կանոնադրության մասին: Ապա Վեհափառ Հայրապետը խոսեց նոր կանոնադրության անհրաժեշտության մասին:

*
* *

Հունվարի 27-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

*
* *

Հունվարի 30-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 3-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Փետրվարի 10-ին, կիրակի.—Բուն Բարեկենդան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: Օրվա խորհրդի մասին բովանդակալից քարոզ խոսեց Տ. Շնորհք վրդ. Բաղդասարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Փետրվարի 14-ին, հինգշաբթի.—Տեառնընդառաջ: Տօն քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի Տաճարն:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Մայր Աթոռի մկրտարանի ծիսակատար Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը:

*
* *

Փետրվարի 17-ին, կիրակի.—Արտաքսման կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Կոմիտաս քհն. Հարությունյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Ս. Էջմիածնի Քրիստոնեական Քարոզչության Կենտրոնի տնօրեն Տ. Աբել վրդ. Օղլուգյանը:

*
* *

Փետրվարի 22-ին, ուրբաթ.—Այսօր Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հոգևորականության հավաքույթ, որի ժամանակ գերաշնորհ Տ. Գրիգորիս եպս. Բունիաթյանը ներկաներին ծանոթացրեց ներքին նոր կանոնադրության դրույթներին: Ապա Վեհափառ Հայրապետը իր խոսքում ներկայացրեց կանոնադրության գործածության կարգի և ժամանակի մասին:

*
* *

Փետրվարի 24-ին, կիրակի.—Անառակի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանը ընթերցեց Օգոստոսյան հռչակագրին նվիրված Վեհափառ Հայրապետի կոնդակը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 3-ին, կիրակի.—Տնտեսի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատրագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*

* *

Մարտի 10-ին, կիրակի.—Դատաւորի կիրակի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*

* *

Մարտի 16-ին, շաբաթ.—Տօն է Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ սոսկալի չարչարանացն և մտին ի Վիրապն:

Այսօր Մայր տաճարում, Իշման ս. սեղանի վրա, պատարագ մատուցեց Տ. Արտակ ավ. քհն. Սիմոնյանը:

*

* *

Մարտի 17-ին, կիրակի.—Գալստեան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց ոմխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ եպս. Պարսամյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 20-ին, չարեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայ-

րապետի բարձր նախագահությամբ, տեղի ունեցավ հանդիպում Հայաստանի մտավորականության հետ:

*

* *

Մարտի 24-ին, կիրակի.—Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա մեծ տոնի վերաբերյալ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 28-ին, հինգշաբթի.—Ավագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սեպուհ ծ. վրդ. Սարգիսյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*

* *

Մարտի 30-ին, շաբաթ.—Ավագ շաբաթ: Ճրագալույց Զատկի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*

* *

Մարտի 31-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պտարագ մատուցեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց: